Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
11.04.2016թ. թիվ 10/4-Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
Արա Զոհրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ք. Երևան, 2016թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի (**այսուհետ՝ Գիտավերլուծական կենտրոն**) կանոնակարգը սահմանում է Գիտավերլուծական կենտրոնի գործունեության կարգը, ինչպես նաև համակարգողին և փորձագետներին նշանակելու կամ ազատելու հետ կապված հարաբերությունները:
2. Գիտավերլուծական կենտրոնը Պալատի խորհրդին առընթեր խորհրդակցական մարմին է և չի հանդիսանում Պալատի ստորաբաժանում:

II. ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

3. Գիտավերլուծական կենտրոնը՝
   - Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված և Պալատին տրամադրված գործերով ներկայացնում է երրորդ կողմի կարծիք (amicus curiae).
   - Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կամ այլ միջազգային դատարանում քննվող գործերով, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է երրորդ կողմի կարծիք (amicus curiae).
   - Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով ներկայացնում է որևէ իրավական ակտի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ գրավոր կարծիք (մեկնաբանություն).
   - Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով ներկայացնում է փաստաբանական գործունեությանն առնչվող իրավական բնույթի հարցի վերաբերյալ գրավոր կարծիք (մեկնաբանություն).
   - Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով մշակում է գիտամեթոդական ձեռնարկներ:

III. ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Գիտավերլուծական կենտրոնի աշխատանքները համակարգում է Գիտավերլուծական կենտրոնի համակարգողը:
5. Գիտավերլուծական կենտրոնի համակարգողին անորոշ ժամկետով նշանակում է Պալատի խորհուրդը՝ Պալատի նախագահի ներկայացմամբ:
   (կետը փոփոխվել է 23.03.2021թ. թիվ 5/16-Լ որոշմամբ)
6. Գիտավերլուծական կենտրոնի աշխատանքներին մասնակցելու համար կարող են հրավիրվել իրավունքի տարբեր բնագավառների մասնագետներ, փաստաբաններ, այլ իրավաբաններ և

իրավապաշտպաններ (**այսուհետ՝ փորձագետներ**), որոնք կարող են կատարած աշխատանքի համար վարձատրվել Գիտավերլուծական կենտրոնի համար ստացված ֆինանսական միջոցներից:

7. Գիտավերլուծական կենտրոնի գործունեության հետ կապված ծախսերը (այդ թվում՝ համակարգողի վարձատրությունը) կատարվում են Պալատի բյուջեի հաշվին: Գիտավերլուծական կենտրոնի աշխատանքների ֆինանսավորման համար Պալատը կարող է ստանալ դրամաշնորհներ, նվիրատվություններ և այլ՝ օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ:
8. Գիտավերլուծական կենտրոնի կարծիքը կարող է ուղարկվել խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով, եթե Պալատի աշխատակազմը գտնում է, որ կարծիքը վերանայման կամ քննարկման կարիք ունի: Գիտավերլուծական կենտրոնի կարծիքը խորհրդի անդամներին ուղարկելու դեպքում, եթե եռօրյա ժամկետում խորհրդի անդամների կողմից առաջարկ չի ներկայացվում հարցը խորհրդի օրակարգում քննարկելու վերաբերյալ, ապա կարծիքը Պալատի աշխատակազմը կարող է ուղարկել հասցեատիրոջը: Խորհրդի առնվազն մեկ անդամի կողմից հարցը խորհրդի նիստում քննարկելու առաջարկի դեպքում, կարծիքը ներկայացվում է խորհրդի քննարկմանը: Կարծիքի նախագիծը հաստատվում կամ փոփոխվում է խորհրդի կողմից:
   (կետը փոփոխվել է 17.04.2019թ. թիվ 7/10-Լ, 23.03.2021թ. թիվ 5/16-Լ որոշումներով)
9. Գիտավերլուծական կենտրոնը կարող է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ այլ երկրներում գործող հասարակական, գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների, փորձագիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների, փաստաբանական կառույցների և դրանց համապատասխան ստորաբաժանումների հետ կապեր հաստատել՝ համագործակցության նպատակով:

IV. ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գիտավերլուծական կենտրոնի համակարգողը՝
    - կազմակերպում է փորձագետների միջև աշխատանքի բաժանումը և համակարգում է նրանց աշխատանքները.
    - ապահովում է Գիտավերլուծական կենտրոնին հասցեագրված գրությունների (հանձնարարությունների, առաջարկությունների) ընթացքը.
    - ներկայացնում է Գիտավերլուծական կենտրոնի գործունեության տարեկան հաշվետվությունը.
    - ստորագրում է Գիտավերլուծական կենտրոնի անունից ելքագրվող փաստաթղթերը.
    - իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

V. ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Գիտավերլուծական կենտրոնի համակարգողի լիազորությունները ցանկացած ժամանակ կարող են դադարեցվել Պալատի նախագահի կամ Խորհրդի նախաձեռնությամբ, ինչպես նաև համակարգողի կողմից այդ մասին Պալատի նախագահին գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:
(կետը փոփոխվել է 23.03.2021թ. թիվ 5/16-Լ որոշմամբ)
12. Համակարգողի լիազորությունները համարվում են դադարած Պալատի Խորհրդի որոշման կայացման պահից, իսկ սույն Կանոնակարգի 11-րդ կետում նշված դեպքում՝ դիմում ներկայացնելու հաջորդ օրվանից:

VI. ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱԶՄԸ

13. Գիտավերլուծական կենտրոնն իր աշխատանքները կազմակերպում է մշտական կամ ժամանակավոր փորձագետների ներգրավման միջոցով:
14. Փորձագետներին նշանակում կամ ազատում է Պալատի նախագահը:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 12-ից:
16. ***(կետն ուժը կորցրել է 23.03.2021թ. թիվ 5/16-Լ որոշմամբ):***
17. ***(կետն ուժը կորցրել է 23.03.2021թ. թիվ 5/16-Լ որոշմամբ):***
18. Սույն կանոնակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն Պալատի խորհրդի որոշմամբ: